ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի հոկտեմբերի 20-ից 22-ը

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Ռուստամ Բադասյան

Աշոտ Մուրադյան

Շուշանիկ Ներսիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալներ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, հոկտեմբերի 20-ից 22-ը

4. Հրավիրող կողմը՝

Ռուսաստանի Դաշնային մաքսային ծառայություն

5.Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Ռուսաստանի Դաշնային մաքսային ծառայություն մաքսային վարչարարության ոլորտում նորագույն նվաճումներին ծանոթանալու և մասնագիտական փորձի և ակտուալ կարծիքների փոխանակման, ինչպես նաև գործընկերային հարաբերություններն ամրապնդելու նպատակով:

6. Քննարկված թեմաները՝

Միջազգային մաքսային ֆորում - 2021 գործարար ծրագիրը ներառել է ավելի քան 25 միջոցառումներ, որոնք միավորված են թեմատիկ քննարկումների այնպիսի կարևոր հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ արտաքին տնտեսական գործունեության թվայնացումը, կորոնավիրուսային համավարակի պայմաններում մաքսային ծառայությունների աշխատանքը, ինտերնետ առևտուրը և այլ հարցեր: Ֆորումի շրջանակներում կազմակերպվել են շնորհանդեսներ և քննարկումների համար հարթակներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Միջազգային մաքսային ֆորումի շրջանակներում կայացել է հանդիպում Կուբայի Հանրապետության մաքսային ծառայության գլխավոր տնօրեն Նելսոն Կորդովես Ռեյեսի հետ: Քննարկվել են երկու պետությունների միջև մաքսային համագործակցությանն ուղղված հարցերը:

Ֆորումի շրջանակներում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայության ղեկավարի պաշտոնակատար Ռուսլան Դավիդովի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր՝ ուղղված մաքսային ոլորտը կարգավորող իրավապայմանագրային դաշտի արդիականացմանը:

Միջազգային մաքսային ֆորումի շրջանակներում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային ծառայության ղեկավար Մեհդի Միրաշրաֆիի հետ: Հանդիպման ընթացքում կարևորվել է Մեղրիի սահմանային անցակետի վերակառուցմանն ու արդիականացմանն ուղղված հարցերը, ինչպես նաև Մեղրի-Նորդուզ անցակետերի միջև տրանսպորտային հոսքերի բարելավմանն վերաբերող հարցերը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահը հանդիպել է նաև Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղար Կունիո Միկուրիայի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել է միջազգային հարթակներում, մասնավորապես Համաշխարհային մաքսային կազմակերպության հասանելի հարթակներում (KUDO, Click platform) փորձի փոխանակման հարցերը:

Այցի ընթացքում ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Աշոտ Մուրադյանը և ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Շուշանիկ Ներսիսյանը մասնակցել են Միջազգային մաքսային ֆորում – 2021 շրջանակներում կայանալիք բոլոր հանդիպումներին, քննարկումներին, մասնավորապես՝ արտաքին տնտեսական գործունեության թվայնացմանը, կորոնավիրուսային համավարակի պայմաններում մաքսային ծառայությունների աշխատանքին, ինտերնետ առևտրին վերաբերող հանդիպումներին և քննարկումներին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Միջազգային մաքսային ֆորումի շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների ընթացքում նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել Կուբայի Հանրապետության մաքսային ծառայության գլխավոր տնօրեն Նելսոն Կորդովես Ռեյեսի հետ՝ նախաձեռնելու մաքսային ոլորտում համագործակցության և փոխօգնության մասին երկկողմ համաձայնագրի ստորագրման գործընթացը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահը և Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայության ղեկավարի պաշտոնակատար Ռուսլան Դավիդովը կնքել են մաքսային կարգավորման ոլորտում մջազգային մի շարք պայմանագրերի գործողության դադարեցման մասին արձանագրություն: Նշված հարցերի բարձրաձայնումը պայմանավորված է որոշ միջազգային պայմանագրերի արդիականության բացակայությամբ, քանի որ դրանցով կարգավորվող իրավահարաբերություններն արդեն իսկ կարգավորված են Երվասիական տնտեսական միության իրավապայմանագրային բազայի շրջանակում, որոնցով էլ առաջնորդվում են ԵԱՏՄ անդամ պետությունները:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահը հանդիպել է Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղար Կունիո Միկուրիայի հետ: Զրույցի ընթացքում վերահաստատվել է Կոմիտեի պատրաստակամությունը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների հաջորդ համաժողովը Հայաստանում անցկացնելու վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի գլխավորած պատվիրակության անդամները և Միջազգային մաքսային ֆորումի մյուս մասնակիցները շեշտել են բարձր մակարդակի սերտ շփումների հաճախականության պահպանման կարևորությունը, որն էականորեն խթանում է փոխադարձ պայմանավորվածությունների արդյունքում համատեղ ծրագրերի իրականացման ընթացքը:

Հանդիպման ավարտին Միջազգային մաքսային ֆորումի մասնակիցները կարևորել են անդամ երկրների միջև հետագա փոխգործակցության անհրաժեշտությունը:

Ելնելով վերոնշյալ ֆորումի կարևորությունից՝ ի կատարումն № 02/06.12/35136-2021 հանձնարարականի, ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Աշոտ Մուրադյանի և ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Շուշանիկ Ներսիսյանի կողմից կազմակերպվել են գործուղման արդյունքների վերաբերյալ սեմինարներ՝ Միջազգային մաքսային ֆորումի շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների, ինչպես նաև Ֆորումի ընթացքում քննարկված հարցերի վերաբերյալ՝ ՀՀ ՊԵԿ համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներին նոր հմտություններ և գիտելիքներ փոխանցելու նպատակով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

10/27/2021

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

26.10.2021թ.